ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Լուսինե Առաքելյան

2.Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան, Թբիլիսի, 2019 թվականի հունիսի 24-26-ը

4.Հրավիրող կողմը

Եվրամիության Արևելյան Գործընկերություն

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

<<Կրթության և մշակույթի միջոցով ընդհանուր արժեքների խթանման>> կոնֆերանսին մասնակցություն

6.Քննարկված թեմաները

- Եվրամիության հիմնարար արժեքները, դրանց ընդունումը.
- Անկախություն կրթության և հետազոտության ոլորտում.
- Ժողովրդավարական կրթություն
- Քննադատական մտածողություն և մեդիագրագիտություն

7. Հանդիպումները

- Տեղի են ունեցել հանդիպումներ ինչպես Եվրամիության Արևելյան գործընկերության, այնպես էլ կոնֆերանսին մասնակից մյուս երկրների ներկայացուցիչների և

պատվիրակությունների հետ: Քննարկվել են հիմնականում հանրակրթության ոլորտին վերաբերող հարցեր, որոնք ընդհանուր են բոլոր երկրների կրթական համակարգերի համար.

- Աշխատանքային ճաշ – Գրեհամ Վիլկիի, Մոլդովայի, Ադրբեջանի և Արևելյան Գործընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ.

8. Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կոնֆերանսի ընթացքում ելույթ-քննարկում եմ ունեցել Մոլդովայի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Եվրամիության ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումն իրականացել է հետևյալ հարցադրումների շրջանակներում.

- Կրթության միջոցով արժեքների խթանումը խնդիր է, թե հնարավորություն:
- Արժեքների նկատմամբ մոտեցման վերանայում
- Կրթության եւ մշակույթի միջոցով արժեքների խթանման հիմնական մարտահրավերները:
- Արժեքների ներմուծման գործընթացում նորարարական մոտեցումների կիրառում:
- Ինչպես ներգրավել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը, ավելի սիներգետիկ կերպով:
- Մասնավոր եւ հասարակական հատվածի ներգրավվածությունն արժեքների փոխանցման գործընթացում:

9. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները:

- Հանդիպման ընթացքում վերահաստատվել է համագործակցության պատրաստակամությունը, ազգային ինքնության պահպանման և համամարդկային արժեքների ընդունման ու տարածման կարևորությունը.
- Ընդհանուր առմամբ, Հայաստանն ունեցավ ակտիվ մասնակցություն առաջադրված բոլոր թեմատիկ քննարկումներով, արժանացավ ջերմ ընդունելության. ներկայացվեց մեր փորձը, կարևորվեցին ինչպես առանձին թեմատիկ ուղղություններով

իրականացվող գործընթացները, ինչպես օրինակ, մեդիաագրագիտությունը հանրակրթությունում, Էրազմուս ծրագիրը բուհական համակարգում, այնպես էլ առհասարակ, կրթության բովանդակության միջոցով ազգային ինքնության և համամարդկային արժեքների փոխանցման ուղղություններով:

- Ելույթի ընթացքում ներկայացվեցին ներկայումս Հայաստանի կրթական համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումները, որոնք անմիջական ազդեցություն են ունենալու արժեքների ամրապնդմանն ու ձեւավորմանը կրթության եւ մշակույթի միջոցով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

01.07.2019